

Թողթակցություն

Ընկ. Երուանդ Պապայանի Գրեգորյանի մեջ

Իր շրջապատում որպես վերջին հանգրվան, ընկ. Ե. Պապայան, իր արվեստը ընկերակցությունում Գրեգորյան ժամանակ Հոկտեմբեր 21-ին: Տեղ եւ Տիկ. Պապայանները հիւրը եղան վերջին և նուրբալ ընկ. Զորա Իսկենտերանի, որուն հրաշքով եկած էին Գրեգորյան: Անոնք վայելեցին ջերմ ու սիրով հիւրասիրությունը ընկ. Իսկենտերանի եւ Օրդ. Ալիս Մարտիրոսի:

Ընկ. Իսկենտերանի հիւրերուն ի պատիւ ճաշկերույթ մը սարքեց ընկերական մտերմիկ շրջանակի մը մէջ՝ Հոկտ. 22, Երեքշաբթի կէսօրին: Վաճառ Թէքէնան վարժարանի եւ ընկ. Պապայանի ազգագրութեան մասին արտայայտուեցան եւ բաժակներ առաջարկեցին ընկ. Անդրանիկ Մարկոսեան, ընկ. Լեւոն Ալեքան, ընկ. Մայր Ասարոնեան, Պրն. Արամ Զիփըր եւ Պրն. Վաղարշակ Դանիէլեան:

Իր կարգին խօսեցաւ ընկ. Պապայան, որ նախ ծանոթացաւ Իսկենտերանի հայրենասէր, բարեհամբաւ գերդաստանին ազգաշէն գործունեության մասին, ապա վեր առաւ ընկ. Զորա Իսկենտերանի ի միջի այլոց՝ Վ. Թէքէնան վարժարանի շինութեան բերած թանկարէն օժանդակութիւնը: Որպէս գաղափարապաշտ կուսակցական, աննկուն հայրենասէր եւ գոհարարող ազգային՝ բաժակ առաջարկեց իր կենացը, քաջատուրութիւն եւ երկնակալութիւն մարդկային իրեն:

Ընկ. Զորա Իսկենտերանի, իր բաժակաճառին մէջ անդրադարձաւ իր երկար տարիներու ազգային-կուսակցական գործունեության՝ յու-

շերով համեմունք, ու այդ մարդին մէջ Իսկենտերանի եւ Պապայանի ընտանիքներուն բազմամեայ բարեկամութեան, ընդգծեց Վ. Թէքէնան վարժարանի անսխալեցողութեամբ և կոշ բրաւ անմիջական օգնութիւն փութացնելու անոր: Ներկաները հիւրասիրուեցան Օրդ. Ալիս Մարտիրոսի պատրաստած համադամ աղանդներով եւ ճաշերով:

Տեղւոյն վրայ կատարուեցան նուիրատուութիւններ: Ընկ. եւ ընկերուհի Լեւոն-Նուարդ Ալեքաններու ընկերակցութեամբ, Պապայանները մինչեւ ուշ ատեն այցելեցին կարգ մը ազգայիններու:

Յաջորդ օր, Զորա Զորաբեկ, ընկ. Պապայանի ընկերակցութեամբ, Տեղ եւ Տիկ. Պապայան, մասնաւոր կարգադրութեամբ այցելեցին Գրեգորյան Համագաղութային ամէնօրեայ վարժարանը եւ ընդունուեցան վարժարանի տնօրէնին՝ Պրն. Ասատուր Ասատուրեանի եւ ուսուցչական կազմին կողմէ: Պրն. տնօրէնին առաջնորդութեամբ հիւրերը այցելեցին դասախոսները եւ ժողով հետաքրքրուեցան տարածած աշխատանքով: Պրն. Պապայան խօսեցաւ աշակերտութեան, շէտեղով հայերէն լեզուի գեղեցկութիւնն ու կարեւորութիւնը: Թեւազրեց սիրել եւ սորվիլ հայերէն լեզուն ու հայերէն խօսիլ միշտ եւ ամէն տեղ: Թեւազրեց՝ յարատեւ աշխատանքով առաւելագոյն չափով օգտուիլ իրենց համար եկած գոհողութիւններէն:

Տեղ եւ Տիկ. Պապայանները կէսօրին վերադարձան Լուս Անճելոս:

Խ. Միտրեան լաւագոյն արուեստագէտներէն Ռուտով Խաչատրեան Տիթորոյի մէջ



Ինքնանկար Ռուտով Խաչատրեանի

Առաջին անգամը չէ որ հայրենի արուեստագէտներ կամ մշակույթի գործիչներ շրջապատը կ'ընկն դէպի արտասահմանի հայահոծ գաղութներ, բերելով իրենց հետ - իրենց տաղանդի ստեղծագործութիւններուն կողքին - շունչը հայրենիքին եւ ողջոյնները՝ Արարատի կենարար շուրթին ներքեւ շինարար աշխատանքի լծուած մեր արեւելահայ եղբայրներուն ու բոլորներուն:

Հայաստանի հողին վրայ հասակ առած եւ էրզրումցի ծնողներէ սերած Ռուտով Խաչատրեանը կը ներկայանար Երեւանի հայկական օրական լաւագոյն ներկայացուցիչներէն մէկը միջազգային դիմանկարչութեան:

Հինգշաբթի երեկոյեան, Հոկտեմբեր 17, 1985, Ռուտովի գեղարուեստի նմոյշներուն ցուցադրութիւնը Տիթորոյի Ս. Յովհ. Մկրտիչ Եկեղեցւոյ Երիտասարդական Կեդրոնին մէջ, նախաձեռնութեամբ՝ Եկեղեցւոյ Արուեստի Յանձնախումբին, կու տար փաստը մեծատաղանդ արուեստագէտի վիթխարի վաստակին, առիթներով քաղաքիս ամէնէն ներառաւարկ արուեստի գործիչները, քննադատներն ու գեղարուեստի խնկարկուները:

Արուեստասէր հիւրերուն մէջ աչքի կը զարնէին հայ մշակույթը դաժատող ու հովանաւորող տիտաններէն Տեղ եւ Տիկ. Ալեք Մանուկեանները, որոնք, շատ յաճախ կ'ըլլան մշակութային ձեռնարկներու, քաջաբերելու համար հայ մշակույթի գործիչները:

Ռուտով Խաչատրեանի ի պատիւ արուած հիւրասիրութեանն ետք խօսք կ'առնէր Ս. Յովհ. Մկրտիչ Եկեղեցւոյ Գեղարուեստի Յանձնախումբի անդամներէն եւ յայտնի մտաւորական Պրն. Երուանդ Ազատեանը, բարեգաղութաւոր ու ողջոյնի ջերմ խօսքերով, եւ ապա կը ներկայացնէր սոյն Յանձնախումբի ժախջան ատեն:

Նապեա Տոքթ. Կարապետ Պէլեանը:

Արուեստի մասնագէտ, քննադատ եւ գեղարուեստի գործերու ու նըշխարներու ճշիւ հաւաքածոյի տէր, Տոքթ. Պէլեանը դրուատիքով խօսեցաւ Ռուտով Խաչատրեանի գեղարուեստական վաստակին եւ արժանիքներուն մասին, զայն դասելով գաղաթ մը դիմանկարչի նուրբ ու խրթին արուեստին մէջ, զաւագոյններէն մէկը ամբողջ աշխարհի:

Ռուտովի չօգտագործեց բազմաթիւ շաքարներ իր արուեստի գործերուն մէջ, այլ կը գոհանայ պարզ մատիտով մը, արտադրելու համար իր գծանկարային դուլիս գործուցները:

«Երեկոյեան» հրատարակչատան տնօրէն եւ քանատնոյծ Վարդերես Գարակօզեանի ընկերակցութեամբ Տիթորոյ ժամանակէն ի վեր, Ռուտով Խաչատրեան գործի լծուեցան գծանկարչու քաղաքիս կարգ մը ազգայիններուն դիմանկարները:

Ուրբաթ, յետ միջօրէին, Պրն. Խաչատրեան այցելեց Լ.Բ.Ը.Մ. Ալեք Մանուկեան վարժարանը եւ հակիրճ պատգամ մը տուաւ ուսանողութեան: Այդ առիթով արտադրեց դիմանկարը աշակերտի մը (Լինտա Կոտոյեան) եւ պատասխանեց կարգ մը հարցումներու: Ան ապա այցելութիւն տուաւ Ս. Յովհ. Մկրտիչ Եկեղեցւոյ համալիրը:

Ռուտով Խաչատրեանի այցելութիւնը Տիթորոյի, կը հանդիսանայ այս քաղաքի մշակութային ձեռնարկներուն ամէնէն պայծառ էջերէն մէկը:

Ա. ԶԵԼԵՊԵԱՆ

ԲԺԻՇԿ ՍՏԵՓԱՆ ԵՆԻԿՈՄՇԵԱՆ

ՄԱՍՆԱԳԷՏ՝ ՍՐՏԻ ԵՒ ՆԵՐՔԻՆ ՀԻՒԱՆԴՈՒԹԵԱՆՑ

(Նախկին դասախոս Պէյրութի Ամերիկեան Համալսարանի Հիւանդանոցի)

ՆԵՐԿԱՏԻՄ ՀԻՒԱՆԴԻՆԵՐ Կ'ԸՆԴԴՈՒՆԻ ԻՐ ԱՆՁՆԱԿԱՆ

ԴԱՐՄԱՆԱՏԱՆ ՄԷՋ

STEVE YENIKOMSHIAN, M.D.

INTERNIST CARDIOLOGIST

(Former Assistant Clinical Professor of Medicine at the American University Hospital at Beirut)

ANNOUNCE THE OPENING OF HIS PRIVATE OFFICE IN THE GLENDALE MEDICAL ART CENTER

1030 S. Glendale Ave., Suite 507, Glendale, Calif. 91205

Tel.: (818) 246-8188

24 Hours Service

Կ'ընդունինք Medi-Cal և ամէն տեսակի Insurance

BUCAREST GROCERY & DELICATESSEN

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ԱՄԵՐԻԿԱՆ, ՀԱՅԱԿԱՆ ՆԵՐԱՇՈՒԱՄ (ՊԱՋԱՆԵԱՆ ԵՐԿԻՐՆԵՐԸ)

ԸՆՏԻՐ ԱՂԱԿԻՐՆԵՐՈՒ (ՄԵՋԷ), ՆՊԱՐԵՂԵՆԵՐՈՒ

ԵՒ ԱՅԼԱՋԱՆ ԽՄԻՉՔՆԵՐՈՒ

Սնկականատէր՝

ԳԵՈՐԳ ԿԻԼԻՊԵՆԿԵԱՆ ԵՒ ՏԻՐԱՆ ՄՈՒԹԱՅԵԱՆ

Արագ եւ խղճամիտ սպասարկութիւն՝ անմրցելի գիներով
Անաւ տնային սպասարկութիւն - Հեռ. 462-8407

ԳՐՈՒՆԻ ԺԱՄԵՐՆ ԵՆ

Երկուշաբթի Ծաբա՝ առաւօտեան ժամը 8-30-էն իրիկուան ժամը 8-00
Կիրակի՝ առաւօտեան ժամը 9-00-էն կէսօրէ ետք ժամը 2-00

5235 HOLLYWOOD BLVD., HOLLYWOOD, CA 90027

ԳԱԶԱԼԵՐԵՑԵՔ ՀԱՅ ԹԵՐԹԸ

ՄԱՆՕԹ. - Ռուտով Խաչատրեանի գործերուն ցուցահանդէսը Լուս Անճելոսի մէջ, պիտի բացուի Նոյեմբեր 12-ին, Heritage Gallery-ի ցուցասրահին մէջ, 728 N. La Cienega Blvd., Los Angeles: